Ոչ պաշտոնական թարգմանություն

Արեւելյան Գործընկերության Մշակութային ծրագիր
Տարածաշրջանային մոնիթորինգի եւ կարողությունների զարգացման կառույց
(ՏՄԿԶԿ)

EuropeAid պայմանագիր թ. **2010/255-219**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԵԿՈՒՅՑԻ

ՀԱՎԵԼՎԱԾ

Արեւելյան Գործընկերության երկրների մշակութային քաղաքականությունների ուսումնասիրություն եւ հետազոտություն

Այս փաստաթուղթը պատրաստվել է Արեւելյան Գործընկերության Մշակութային ծրագրի Տարածաշրջանային մոնիթորինգի եւ կարողությունների զարգացման կառույցի կողմից

Հունվար 2015

Այս փաստաթուղթը թողարկվել է Եվրամիության աջակցությամբ: Հավելվածի բովանդակության բացառիկ պատասխանատուն Արեւելյան Գործընկերության Մշակութային ծրագրի Տարածաշրջանային մոնիթորինգի եւ կարողությունների զարգացման կառույցն է: Այստեղ արտահայտված են մասնակից փորձագետների կարծիքները, որոնք որեւէ կերպ չեն կարող արտահայտել Եվրահանձնաժողովի տեսակետները:

ՏՄԿԶԿ ծրագիրն իրականացվում է Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH-ի գլխավորած կոնսորցիումի կողմից՝ համագործակցությամբ HYDEA S.p.A.-ի (Իտալիա) եւ RWTH Aachen University-ի (Գերմանիա):

ԱՌԱՋԱԲԱՆ

Այս փաստաթուղթը լրացնում է Հայաստանի մշակույթի ոլորտի եւ մշակութային քաղաքականության հիմնարար վերլուծական զեկույցին՝ պատրաստված Արեւելյան գործընկերության մշակութային ծրագրի Տարածաշրջանային մոնիթորինգի եւ կարողությունների զարգացման կառույցի կողմից (ՏՄԿԶԿ) 2012 թվականի օգոստոսին եւ վերանայված 2013 թվականի հունվարին: Զեկույցը հրատարակվել է Ծրագրի կայքում (http://www.euroeastculture.eu/en/database-of-materials/view-armenia-analytical-base-line-reports-on-the-culture-sector-and-cultural-policy.html):

Այս հավելվածն արտացոլում է այն հիմնական փոփոխությունները, որ տեղ են գտել երկրի մշակութային քաղաքականության համատեքստում 2012 թվականից ի վեր: Սույն փաստաթղթի բովանդակության համար պատասխանատվությունը միմիայն ՏՄԿԶԿ-ինն է եւ արտացոլում է մասնակից փորձագետների կարծիքը: Այն որեւէ կերպ չի կարող արտահայտել Եվրահանձնաժողովի տեսակետները: Փաստաթուղթը պատրաստվել է ՏՄԿԶԿ փորձագետ տիկին Սեդա Պապոյանի կողմից՝ մասնակցությամբ ՏՄԿԶԿ ղեկավար պարոն Լուչիանո Գլուրի, ՏՄԿԶԿ կարողությունների զարգացման փորձագետ տիկին Տետյանա Բիլեցկայայի եւ ՏՄԿԶԿ ուսումնասիրությունների մեթոդական ուղեցույցերի համար պատասխանատու փորձագետ պարոն Թերի Սանդելի:

2013 թվականին ՏՄԿԶԿ-ը հրապարակել է Արեւելյան Գործընկերության երկրների մշակութային քաղաքականությունների եւ միտումների տարածաշրջանային հետազոտական զեկույցը, ինչպես նաեւ ԱԼԳ երկրների մշակույթի ոլորտի եւ մշակութային քաղաքականության վեց հիմնարար վերլուծական զեկույցները: Այդ զեկույցները նախատեսված են լայն լսարանի համար, որը ներառում է Արեւելյան Գործընկերության եւ Եվրամիության երկրների մշակույթի ոլորտի բոլոր շահագրգիռ կողմերին: Նշված փաստաթղթերն ամփոփում են 2011 թվականի հոկտեմբերից մինչեւ 2012-ի մարտն ընկած ժամանակահատվածում ՏՄԿԶԿ-ի կողմից Ադրբեջանում, Բելառուսում, Հայաստանում, Մոլդովայում, Վրաստանում եւ Ուկրաինայում իրականացված *Արեւելյան Գործընկերության երկրների Մշակութային քաղաքականությունների ուսումնասիրության եւ հետազոտության* արդյունքները: Ուսումնասիրությունները կենտրոնացվել են նշված երկրների ազգային մշակութային քաղաքականությունների վրա եւ գործնականում կոչված են եղել ապահովելու ռազմավարական ուղղորդում Արեւելյան Գործընկերության Մշակութային ամբողջ ծրագրի եւ ՏՄԿԶԿ նախագծի համար: ԱԼԳ երկրների մշակութային ոլորտի ներկա իրավիճակը վերլուծելու հատուկ համակարգը մշակվել էր ՏՄԿԶԿ-ի կողմից: Այն նախեւառաջ հիմնված էր այդ երկրներին բնորոշ քաղաքականությունների հայեցակարգային համեմատական վերլուծության վրա՝ միջազգային չափանիշներին համապատասխան, որոնք կիրառվում էին ՏՄԿԶԿ-ի կողմից՝ վեց տեղական փորձագետների հետ համագործակցությամբ եւ գլխավորությամբ մեկ միջազգային փորձագետի: Զեկույցների պատրաստումը, հրատարակումն ու հետագա տարածումը խթան հանդիսացան Ծրագրի շահառուների եւ այլ շահագրգիռ կողմերի մեկնաբանությունների եւ ներդրումների համար՝ հանգեցնելով ԱԼԳ երկրներում ու դրանցից դուրս մշակութային քաղաքականության հարցերի շուրջ բանավեճի: Կասկած չկա, որ Ծրագրի իրականացման ընթացքում մշակութային քաղաքականության հարցերի շուրջ երկխոսությունը նպաստել է, որպեսզի Արեւելյան Գործընկերության երկրներում մշակույթն ավելի լավ ինտեգրվի ազգային, տարածաշրջանային եւ տեղական զարգացման քաղաքականությունների մեջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախորդ երեք տարիների ընթացքում Հայաստանում մշակութային միջավայրի վրա ազդող մի քանի տարբեր ուժեր ու զարգացումներ են եղել: Դրանք բարդ պատկեր են ներկայացնում, քանի որ եղել են որոշ դրական փոփոխություններ, իսկ այլ դեպքերում չնչին կամ գրեթե ոչ մի ազդեցություն չի եղել եւ ոչինչ իրականում չի փոխվել: Այլ փոփոխություններ կարող են տեսանելի լինել հետագայում՝ հատուկ ուղղություն սահմանելով երկրի մշակութային ճակատագրի համար: Ինչ վերաբերում է 2015 թվականի սկզբին, կարելի է ասել, որ մշակութային քաղաքականությունը Հայաստանում դրվում է փորձարկման, հուսանք՝ դրական:

ԱԼԳ Մշակութային ծրագիրը եւ Հայաստանի վերափոխված մշակութային մթնոլորտը

Արեւելյան Գործընկերության մշակութային ծրագրի առնչությամբ, ի թիվս այլոց, մի շատ կարեւոր բան պետք է նշել եւ արժեւորել. առնվազն ծրագրի շրջանակներում Հայաստանի անկախ Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ Մշակույթը գլխավոր դերում էր եւ համապատասխան վերաբերմունքի էր արժանանում: Մի շարք մշակութային դերակատարների կողմից տարբեր փորձեր կատարվեցին հաստատելու եւ որոշ դեպքերում նաեւ ձեւավորելու պատշաճ ընկալում այն մասին, որ մշակույթն անգնահատելի հիմք է փոփոխության եւ զարգացման համար: Այդ փորձերի շարքում ամենամեծ դերն առաջին հերթին ունեցան ԵՀ կողմից Արեւելյան Գործընկերության Մշակութային ծրագիր I-ի շրջանակներում դրամաշնորհ ստացած համատեղ նախագծերը, որոնք արդյունավետ հարթակներ ապահովեցին ոչ միայն միջսահմանային համագործակցության, այլեւ ուսուցման եւ փորձի փոխանակման համար, որոնք այնուհետեւ վերադարձվեցին եւ տեղայնացվեցին ազգային իրողություններում: Այս համատեքստում Հայաստանը կարող է համարվել դրամաշնորհային ծրագրերի ամենամեծ ազդեցություն կրողը թեկուզեւ այն փաստի հիման վրա, որ որպես գործընկեր՝ ներգրավված էր ամենից շատ ծրագրերում՝ ԱԼԳ բոլոր մյուս երկրների համեմատ. ընդհանուր 15 տրամադրված դրամաշնորհային ծրագրերից Հայաստանը գործակցում էր 13-ում:

Բոլոր այդ ծրագերը «անմոռանալի» եւ դրական շարժ բերեցին Հայաստանի մշակութային ոլորտ: Բայց դրանց վառ ազդեցության նկատմամբ եղած հարգանքով հանդերձ, պետք է ընդունել, որ ցանկացած «նախագիծ» կոնկրետ տեւողություն ունի եւ ինչ-որ ժամանակ անց ավարտվում է՝ ի տարբերություն մշակութային քաղաքականության բարեփոխումների, որոնք կարող էին ունենալ ավելի խորը եւ տեւական կառուցվածքային ազդեցություն երկրի մշակութային դաշտի վրա:

Անդրադառնալով 2011-2012 թվականներին կատարված հիմնարար վերլուծական զեկույցի գլխավոր կետերին՝ գրեթե բոլորի դեպքում կարող ենք դիտարկել որոշ անառարկելի դրական փոփոխություններ: Հետեւյալ հիմնական ցուցանիշները կոչված են պատկերավոր դարձնել այդ դրական փոփոխությունները.

- իշխանությունների կողմից եւ ընդհանուր առմամբ երկրում մշակույթի նկատմամբ ավելի մեծ եւ պատշաճ ուշադրությունը,
- բնակչության շրջանում մշակույթի դերի եւ ուժի մասին տեղեկացվածության բարձրացումը,
- ինտերնետի եւ այլ հաղորդակցական տեխնոլոգիաների մեծ կարեւորությունը ողջ հայ հասարակության համար,
- սփյուռքահայ հայրենադարձների նոր ալիքը, որ ընդնահրապես ապրելու նոր մշակույթ են բերում:

Մոտ երեք տարի ժամանակահատվածում որեւէ հսկա եւ տեսանելի փոփոխություն տեղի չի ունեցել հայկական մշակութային մթնոլորտում, թեեւ նկատելի են մի շարք տեղաշարժեր, որոնք կարող են ճիշտ ուղղություններ արմատավորել:

Ամբողջ մշակութային ոլորտը դեռեւս կարգավորվում է մեկ հիմնական օրենքով՝ «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին», առանց որեւէ լրացուցիչ կոնկրետ օրենքների կամ քաղաքականության, օրինակ՝ կինոյի կամ թատրոնի մասին:

Մշակույթի նախարարությունը շարունակում է մնալ ոլորտում հիմնական որոշում կայացնողը եւ դերակատարը՝ մշակույթին աջակցողի եւ այն գործարկողի հիմնական դերերով: Առայժմ չկա որեւէ փաստաթղթավորված մշակութային քաղաքականություն, իսկ հիմնական ուղղությունը կենտրոնացված է մշակութային ժառանգության պահպանման վրա: Սակայն նույնիսկ այստեղ միշտ չէ, որ Նախարարությունը համապատասխան քայլեր ձեռնարկելու բավարար իշխանություն ունի, երբ ներգրավված են ավելի հզոր ուժեր. ասվածի օրինակ է Երեւանի՝ Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում ընգրկված ամենահին՝ փակ շուկայի շենքի վերափոխումը սուպերմարկետի, որը պատկանում է երկրի պատգամավոր օլիգարխներից մեկին:

2015 թվականի ամռանը Մշակույթի նախարարությունը մտադիր է մշակութային քաղաքականությանը նվիրված գիտաժողով անցկացնել, ինչը դրական նշան է եւ ցույց է տալիս, որ այս պետական հաստատությունը սկսում է ջանքեր գործադրել ոլորտում ավելի կառուցվածքային փոփոխությունների համար, այլ ոչ թե պարզապես հանդես գալ որպես մշակութային միջոցառումների եւ նախաձեռնությունների կազմակերպիչ կամ հովանավոր: Մյուս կողմից ԱԼԳ մյուս երկրների նման՝ առայժմ երկխոսության պակաս կա Նախարարության եւ հասարակակական կազմակերպությունների միջեւ, որը կարող էր հանգեցնել մշակույթի ոլորտի զարգացմանն ուղղված համատեղ ջանքերով նոր թարմացված, համակարգված եւ մասնագիտական տեսլականի:

Վերջերս որոշակի աճ է արձանագրվել մշակութային մասնակցության մեջ, ինչը երկրում մի շարք տարբեր մշակութային համագործակցություններով պայմանավորված ավելի ակտիվ մշակութային կյանքի ուղղակի արդյունքն է, որին նաեւ միջազգային մշակութային կազմակերպություններն են նպաստել: Մշակութային այս միջոցառումներից շատերը նախաձեռնել են ՀԿ-ները կամ մասնավոր առեւտրային կազմակերպությունները, ինչպես նաեւ տեղական իշխանությունները: Հատկապես ակտիվ է Երեւանի քաղաքապետարանը, որը փորձում է նոր ավանդույթներ ստեղծել հինավուրց մայրաքաղաքի համար՝ կազմակերպելով բազմազան փառատոներ, համերգներ, քաղաքային իրադարձությունները եւ այլն: Մյուս կողմից, նույնիսկ ԱԼԳ Մշակութային ծրագրով իրականացված դրամաշնորհային նախագծերի՝ Հայաստանի մարզերում ունեցած մեզ ազդեցությամբ հանդերձ, մայրաքաղաք Երեւանի եւ երկրի մյուս հատվածների միջեւ բացը դեռեւս հասկայական է մշակութային ապահովման եւ մասնակցության առումով:

Այն, որ Հայաստանի իշխանությունները մշակույթին եւ մշակութային ինքնությանը ավելի բարձր նպատակահարմարություն են վերագրում՝ մի քանի տարի առաջվա համեմատությամբ, փաստում է Հայաստանի բրենդ ձեւավորելու կառավարության համապարփակ ծրագիրը, որը նախատեսում է պետության ինքնությանը նվիրված հեռագնա ծրագրի միջոցով ստեղծել երկրի տարբերվող բրենդային կերպար: ՀՀ կառավարությունը բրենդավորման այս նախաձեռնությունը համարում է հայկական մշակույթի, պատմության եւ մի շարք ազգային արժեքների միջոցով զբոսաշրջությունը խթանելու հարթակ:

Գոյություն ունի եւս մի վստահելի գործոն, որը հետագա զարգացումներ է խոստանում արվեստի եւ մշակույթի ոլորտում. խոսքը թվայնացման միտումների եւ տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) օգտագործում մասին է: Նախորդ մի քանի տարիների ընթացքում մշակութային հաստատությունների մեծ մասը, եթե ոչ բոլորը ձեռք են բերել իրենց «թվային անձնագիրերը»՝ հաստատելով իրենց թվայնացված գոյությունը ինտերնետում: Նրանք զարգացրել են իրենց կարողությունները ոչ միայն պարզապես ստեղծելու եւ վարելու պարզ կայքեր, այլ որոշ դեպքերում օգտվելու համար ժամանակակից թվային տեխնոլոգիաների նորագույն նվաճումներից: Որոշ կազմակերպություններ սկսեցին վերագնահատել հայկական ժառանգության մշակութային արժեքը այնպիսի համակողմանի ծրագրերում, ինչպիսին է 360ARMENIA-ն, որը երկրի լավագույն զբոսաշրջային ուղղություններն ի ցույց է դնում շատ նոր ու թարմ ոճով՝ օգտագործելով մուլտիմեդիա տեխնոլոգիաներ:

Հայաստանը նաեւ հպարտ է, որ եւս մեկ ձեռքբերում ունի ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտում. 2014 թվականի նոյեմբերին հայկական ավանդական բարակ հացը՝ լավաշը, ընգրկվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության

ներկայացուցչական ցանկում՝ «Լավաշ. ավանդական հացի պատրաստումը, նշանակությունը և գոյությունը՝ որպես մշակութային դրսեւորումներ Հայաստանում»:

Ի լրումն վերը նկարագրված իրավիճակի՝ Հայաստանի ներկա մշակութային մթնոլորտում գոյություն ունի եւս մի կերեւոր կետ, որը գուցե եզակի է եւ տիպիկ հայկական՝ համեմատած այլ ԱԼԳ երկրների հետ. դա աշխարհասփյուռ Հայկական Սփյուռք երեւույթն է եւ աշխարհի տարբեր կողմերից հայրենադարձ սփյուռքահայերի նոր ալիքը, որ փորձում են իրենց կյանքը հաստատել պատմական հայրենիքում: Երեւույթների նկատմամբ իրենց միանշանակ տարբերվող մոտեցումներով եւ երկրին աջակցելու կամքով վերջին տարիների ընթացքում հայրենադարձները շատ դրական փոփոխություններ են բերել հայկական մշակութային մթնոլորտ. նրանք հիմնում են նոր բիզնեսներ, ներգրավվում են երկրի սոցիալական, մշակութային եւ նույնիսկ քաղաքական կյանքում, եւ, որ ամենակարեւորն է, այս փոքր պետության լուսավոր ապագայի մաս կազմելու հստակ տեսլական ունեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերադառնալով մշակութային քաղաքականությունը «փորձարկման դնելու» միտմանը՝ հարց է առաջանում, թե արդյո՞ք նոր քաղաքականություն է մշակվում, եւ արդյո՞ք տարբեր մշակութային շահագրգիռ կողմերը, ովքեր հավատում են եւ փորձում են խթանել նմանատիպ մի գործընթաց եւ ուղղություն, պատրաստվում են հաջողության հասնել՝ իրականացնելով երկարաժամկետ դրական, կայուն ապագայի համար անհրաժեշտ փոփոխություններ: Այս կասկածները հիմնված են ոչ միայն կառուցվածքային փոփոխությունների կամ նպատակների, առաջ նայող ծրագրերի սակավության, այլ նաեւ ավելի խորը քաղաքական գործոնների վրա, որոնք դուրս են մշակույթի ոլորտից: Առաջին հերթին սա վերաբերում է Հայաստանի կառավարության պաշտոնական արտաքին քաղաքականության շրջադարձին՝ ԵՄ Ասոցացման համաձայանագիրը ստորագրելու փոխարեն Ռուսաստանի գլխավորած Մաքսային միությանը միանալը: Սա հիմքեր է տալիս մտահոգվելու երկրի բարձր օղակներում խորհրդային ոճի մտածողությանն ու գործելակերպին հնարավոր «վերադարձի» շուրջ, որը ոլորտներից նախեւառաջ մշակույթի վրա կարող է ազդել: Այս Հավելվածի պահին Հայաստանը նոր է ստորագրել Մաքսային Միությանը միանալու համաձայագիրը, եւ այս քայլի հետեւանք հանդիսացող փոփոխությունները առջեւում են եւ դեռ անկանխատեսելի:

Այժմ մշակույթի ոլորտից է կախված, թե որքանով այն կկարողանա պահպանել եւ ընդլայնել վերջին ձեռքբերումները: Նաեւ Հայաստանից կախված կլինի այդ ձեռքբերուների հիմքում ընկած արժեքների պահպանումը: Նոր փորձերի պատրաստ, բաց եւ համագործակցող տրամադրությունը մեկն է այն նախապայմաններից, որոնք կարող են հանգեցնել տեսանելի եւ ընկալելի փոփոխության: Հայ հասարակությունը դեռ պիտի հաստատի, որ իրականում մշակույթը համարում է երկրի սոցիալական եւ տնտեսական աճին նպաստող միջանցիկ հարթակ, եւ որ արվեստին ու մշակույթին համարժեք դեր է վերագրում: